ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՌՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2020թ. սեպտեմբերի 5-ի թիվ 424 որոշմամբ

ՌԵԿՏՈՐ - Ա.Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

«ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ» դասընթացի հայեցակարգ

Որակավորման աստիճան՝ բակալավր

Ներածություն

Դասընթացը փոխվել է և՛ բովանդակությամբ, և՛ անվանումով: Այդ իսկ պատճառով կարիք զգացվեց փոփոխություն մտցնել նաև ամբիոնի անվանման մեջ: Դա բացատրվում է նրանով, որ ծրագրի հենքը հայագիտության բաժինների առկայությունն ու ընդգրկվածությունն է: Կարելի է ասել՝ մայր երակն է:

Բակալավրիատում դասավանդվող «Խոսքի մշակույթ» առարկային հատկացվում է 144 ժամ /շաբաթական 2 մուտք՝ 4 ժամով/: Այս ծրագիրը նախատեսված է այն ուսանողների համար, որոնք դպրոցում ուսումնասիրել են հայոց լեզու և գրականություն:

Հայեցակարգն իր մեջ պայմանականորեն ընդգրկում է կրթական երկու շղթա՝ «Դասընթացի մեջ» և «Դասընթացից դուրս»:

Դասընթացի նպատակը

Խորացնել գիտելիքները բանավոր և գրավոր խոսքին /տեքստի կատարյալ շարադրանք, գիտական և հռետորական խոսք, զանգվածային լրատվության միջոցների լեզու, պաշտոնական գրություններ, բանավիճային խոսքի հնարներ և հմտություններ/ տիրապետելու համար:

Վերոհիշյալ գիտելիքներին զուգահեռ՝ ուսանողը կստանա հայագիտությանը վերաբերող խոր գիտելիքներ:

Այսպիսով՝ կտիրապետի առարկայի եզրույթաբանական գործառույթներին և հնարավություն կունենա ձեռք բերված գիտելիքները կիրառելու գործնականում, գիտական գործունեության ողջ ընթացքում:

Հայ ՀՌԼԱՍԱՍԱ ԱՍԱՍԱՍԱՍԱՆԻ գիտ. խորհուրդ

Դասավանդման մեթոդաբանությունը

Դասավանդման ընթացքը կազմված է

1. թեմայի ներկայացումից, երբ դասախոսը տեսական և նկարագրական նյութով մատուցում է ծրագրային դասը՝ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կազմած Power Pointer լսարանային ցուցադրություններով, հատուկ կազմված հավելվածներով:
2. սեմինարներից, որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են նախատեսված թեմաներին վերաբերող պարտադիր և լրացուցիչ գրականություն և քննարկում այն՝ դասախոսի ղեկավարությամբ:
3. գիտելիքների ստուգումից՝ միջանկյալ ստուգարքների միջոցով, բանավոր և գրավոր հարցումների տեսքով:

Ստուգումների անցկացման կարգը

Ցանկալի կլինի առարկան ավարտել քննությամբ և ոչ թե ստուգարքով: Դա ավելի կմեծացնի պատասխանատվությունը և ուշադրությունն առարկայի նկատմամբ:

- գրավոր հարցում՝ միջանկյալ մոդուլներ /թեստ, փոխադրություն, շարադրություն/,
- բանավոր հարցում՝ սեմինարների ընթացքում նյութի ներկայացման միջոցով,
- բանավոր և գրավոր հարցում՝ վերջնական քննության տեսքով: Տարեվերջյան բանավոր հարցումը կանցկացվի՝ զրույց-հարցման ձևով՝ նախապես տրված հարցաշարի շրջանակներում: Հարցատոմսը կընդգրկի երկու կիսամյակում անցած նյութից 3 հարց. որոնցից 2-ը կլինեն տեսական հարցեր, իսկ 3-րդը՝ գործնական: Գրավոր աշխատանքը կտրվի ամենավերջում՝ որպես ստուգողական:

Գնահատման չափորոշիչները մշակվում են յուրաքանչյուր դասախոսի կողմից անհատապես՝ կախված տվյալ նյութի բարդության աստիճանից:

Նոր ծրագրով «Խոսքի մշակույթ» գործնական դասընթացի դասավանդման հիմնական սկզբունքներն են.

1. լեզվական իրողությունները ներկայացնել հատուկ նշանակությամբ՝ տեքստերի միջնորդությամբ՝ բանավոր և գրավոր խոսքը զարգացնելու նպատակով,
2. ուսանողին մատուցել գիտելիքներ հայագիտության բոլոր բնագավառներից,
3. ուսանողի մոտ զարգացնել ինքնուրույն մտածելու, ստեղծագործելու, բանավիճելու, տեսակետ հայտնելու ունակություններ,

Հայ-Ռուսական (Սլավոնական) պետական համալսարան

4. ուսանողին աստիճանաբար պատրաստել գիտական հոդվածներ գրելու, գիտական գործունեություն ծավալելու ուղղությամբ:
5. ուսանողի մոտ զարգացնել գրական տեքստը հասկանալու, ըմբռնելու կարողություններ
6. նկատել և գնահատել այն ուսանողներին, որոնք ստեղծագործական հակումներ ունեն:

«Դասընթացից դուրս»

- Թատրոնի միջոցով զարգացնել ճաշակ, կյանքի հանդեպ խորագետ հայացք, պատրաստել լավ հանդիսատես:

- Հանդիպումներ մշակութային, հասարակական-քաղաքական և կրթական գործիչների հետ:

- Սոցիալական ցանցում /ՀՌՀ ստեղծագործողների Վերնատուն/ արդեն իսկ ստեղծված հարթակում ներկայացնել, տեղադրել մեր ուսանողների ստեղծագործությունները, հոդվածները:

- Նախապատրաստել ուսանողների գործունեությունը հարցազրույցների մակարդակում համապատասխան ոլորտի մասնագետներից: Օրինակ՝ կենսաբաններն իրենց, մաթեմատիկոսներն՝ իրենց՝ արդի խնդիրների վերաբերյալ, այնուհետև խմբագրվեն և տեղադրվեն գործող հարթակում: Հնարավոր է՝ արտատպումներ լինեն, որը նույնպես կօգնի խոսքի մշակույթի հմտությունների զարգացմանը:

- Ուսանողներին տեղյակ պահել բոլոր այն ցանցերի մասին, որտեղ տեղադրված են միջազգային սեմինարիների և գիտաժողովների կանչեր (call), օրինակ՝ Armacad և այլն: Անվերջ խրախուսել, որպեսզի նրանք մասնակցեն միջազգային գիտաժողովների և սեմինարիների՝ հայագիտության և հումանիտար տարբեր ուղղություններով:

- Կազմակերպել ուսանողական կլոր-սեղաններ (round-table) սփյուռքահայ ուսանողների և գործիչների հետ՝ Հայաստան-Սփյուռք խնդիրների շուրջ տարբեր ոլորտների ամենաարդիական հարցերն ու միջազգային փորձն ավելի լավ հասկանալու համար:

- Նախատեսել դասախոսների և ուսանողների հանդիպումները օտարազգի հայագետների հետ:

Հայ-Ռուսական (Սլավոնական) գիտ. Խորհուրդ

- Նախատեսել հայագիտության դասերի անցկացում պատմամշակութային միջավայրերում, շրջանակ, որը դեռ կարիք ունի մշակման և հնարավորությունների գնահատման:

- Ուսանողներին առաջարկել օն-լայն թանգարաններ՝ առանց ծանրաբեռնելու նրանց՝ ընտրելով այն թանգարանները, որոնք ունեն հայ մշակույթի նմուշներ՝ հետագայում նրանց սովորեցնելով գրել էսսեներ, հոդվածներ, որոնք /լավագույն աշխատանքները/ կխրախուսվեն և կտպագրվեն:

- Շարունակել վիկտորինաների անցկացման գործընթացը:

<u>Դասերի և թեմաների ժամանակացույցը</u>

<u>1-ին շաբաթ</u>

Ներածական խոսք. «Հայկական մշակույթ»:

«Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ»:

Թելադրություն՝ ուսանողների գիտելիքներին ծանոթանալու համար:

Հայերենը՝ որպես հնդեվրոպական ընտանիքի լեզու: Այլ լեզվաընտանիքներ:

<u>2-րդ շաբաթ</u>

«Ժայռապատկերներից մինչև այբուբեն» /կամ «Մատենադարան»/ կինոնկարի դիտում և քննարկում:

<u>3-րդ շաբաթ</u>

Հայագիտական կենտրոններ, մշակութային և կրթական օջախներ:

Հայկական գաղթօջախներ:

Խոսքարվեստ. գրավոր և բանավոր խոսք:

Բանավոր խոսքի բաղադրիչները:

<u>4-րդ շաբաթ</u>

Նշանավոր հայագետներ /հայ և օտարազգի/:

Բառապաշար. շերտերը: Հիմնական բառաֆոնդ:

Հայ-Գերմանական համալսարանի գիտ. խորհուրդ

5-րդ շաբաթ

Հայ պարբերական մամուլը: Լավագույն հանդեսները:

Գրավոր խոսք: Տեքստի կառուցում. սկիզբ, հիմնական մաս, ավարտ:

6-րդ շաբաթ

V դար. Մեսրոպ Մաշտոց: Դասական և նոր ուղղագրություն:

Թարգմանական դպրոցի ստեղծումը, պատմագրությունը, փիլիսոփայական միտքը:

Մասնագիտական տեքստ, եզրույթներ:

7-րդ շաբաթ

Հայ միջնադարյան գրականություն: Գրիգոր Նարեկացի

Հայերենի բառակազմական օրենքները:

Բառակազմական վերլուծություններ տեքստում:

Բառերի ձևաիմաստային տեսակները:

8-րդ շաբաթ

Հայ միջնադարյան գրականություն: Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի:

Հայերենի քերականական կարգերը:

Տեքստի ձևաբանական վերլուծություն:

9-րդ շաբաթ

Հայ միջնադարյան գրականություն: Սայաթ-Նովա:

Աշուղական արվեստ: Հայ աշուղներ:

Հայերեն նախադասության տրամաբանությունը, կապակցության միջոցները:

Տեքստի շարահյուսական վերլուծություն:

10-րդ շաբաթ

Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը:

Խոսքային ոճ: Տեքստի լեզվաոճական առանձնահատկությունները:

11-րդ շաբաթ

Արևմտահայ գրականության պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Հակոբ Պարոնյան, Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց, Երվանդ Օտյան:

Գեղարվեստական ոճ:

Գեղարվեստական պատկերավորման միջոցները:

Հայ-ռուսական համալսարանի գիտ. խորհուրդ

12-րդ շաբաթ

Հայ նոր գրականություն: Արևելահայ գրականություն:

Խաչատուր Աբովյանը՝ որպես հայ-ռուսական հարաբերությունների ջատագով:

Գործնական գրություններ /ինքնակենսագրություն, լիազորագիր, դիմում, հրավիրատոմս, բացատրագիր, մուրհակ, արձանագրություն և այլն/:

Նամակը անցյալում և այսօր:

13-րդ շաբաթ

Հայ գրականության չորս գագաթները. Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց:

Հրապարակախոսություն և հրապարակագրություն. առանձնահատկությունները:

Զանգվածային լրատվության, մամուլի, սոցիալական ցանցերի լեզուն, ռադիոհեռուստալեզու:

14-րդ շաբաթ

Հայ հոգևոր երաժշտություն:

Հայ կոմպոզիտորական դպրոցները:

Հայերենի գործառական ոճերը:

Առօրյա խոսակցական ոճ: Բարբառային ձևեր, ժարգոններ:

15-րդ շաբաթ

Էջեր հայ բժշկագիտության պատմությունից:

Հայ նշանավոր բժշկապետեր:

Ուղղագրություն և ուղղախոսություն:

Հայերեն բառերի արտասանության սկզբունքները:

Պատմական, փոխազդեցական, շեշտական հնչյունափոխության տեսակները:

16-րդ շաբաթ

Հայ նորագույն գրականություն: Դերենիկ Դեմիրճյան, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի:

Հայերենի բարբառները:

17-րդ շաբաթ

Հայ նորագույն գրականություն. Համո Սահյան, Վահագն Դավթյան, Հովհաննես Շիրազ, Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան, Մարո Մարգարյան:

Չափածո և արձակ:

Հայ-ռուսական համալսարանի գիտ. խորհուրդ

Գիտական տեքստի շարադրանքը, առանձնահատկությունները:

18-րդ շաբաթ

Հայ գրականության վերելքը XX դարի 60-ականներին: Հրանտ Մաթևոսյան, Աղասի Այվազյան, Պերճ Զեյթունցյան:

Գրագետ գրելու և խոսելու նշանակությունը:

Անհատական ոճերի բազմազանությունը:

19-րդ շաբաթ

Հայ ճարտարապետությունը. անցյալը և ներկան:

Հայկական վանքեր, խաչքարեր:

Հետաքրքիր պատմելու և խոսելու արվեստը:

Բառապաշարի հարստացումը:

20-րդ շաբաթ

Հայ նշանավոր քանդակագործներ և գեղանկարիչներ:

Ազգային տոները, ծեսերը, սովորությունները:

Ծեսերի փոփոխությունները մեր ժամանակներում:

Այսօրվա լեզվական իրավիճակը:

21-րդ շաբաթ

Հայ թատրոնի անցած ուղին:

Գրական ժանրեր:

Համաձայնությունը և խնդրառությունը հայերենում: Ոճական սխալների շտկումը:

21-րդ շաբաթ

Էջեր հայ կիրառական արվեստի պատմությունից:

Իմաստային նրբերանգներ: Բառի դիպուկ կիրառելիության ձևերը:

Մասնագիտական տեքստերի թարգմանություններ:

Տեքստի խմբագրում:

22-րդ շաբաթ

Սփյուռքահայ գրականության ձևավորումը, վառ ներկայացուցիչները:

Զրույցի և բանավեճի տարբերությունները:

Բանավիճելու արվեստը:

Հայ Ազգային Ճարտարապետների Միություն
գիտ. խորհուրդ

23-րդ շաբաթ

Արդի հայ արձակը /Լևոն Խեչոյան, Գրիգոր Խանջյան, Վահագն Գրիգորյան, Արամ Պաչյան, Սուսաննա Հարությունյան/:

Ուսանողների բանավոր ելույթների կազմակերպում լասարանի առջև:

24-րդ շաբաթ

Արդի բանաստեղծությունը: Տաղաչափություն, ազատ ոտանավոր: Հովհաննես Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Ռազմիկ Դավոյան:

Հայ բառարանագրության պատմությունից: Հայ նշանավոր բառարանագիրներ և բառարաններ:

Բառարանների տեսակները, նրանցից օգտվելու եղանակները:

24-րդ շաբաթ

Հայ կինոն:

Գիտական բանավեճեր: Քաղաքական բանավեճեր:

Բանավեճի ընթացքում ընդդիմախոսին լսելու և նրա փաստարկների մեջ խորանալու կարևորությունը:

25-րդ շաբաթ

Հայ լավագույն թարգմանիչները:

Թարգմանությունը՝ իբրև լեզվի կարևորագույն գործառույթներից մեկը:

Թարգմանությունների դերը ժողովուրդների մերձեցման, մշակույթների փոխհարստացման գործում:

26-րդ շաբաթ

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում 301 թվականին, նրա ազդեցությունը ազգային մշակույթի և հոգեկերտվածքի վրա:

Դարձվածք և բառակապակցություն:

Պատկերավոր արտահայտություններ, առածներ, ասացվածքներ:

Դերանունների գործածությունը կապային կառույցներում: Հաճախադեպ սխալներ:

27-րդ շաբաթ

Համաշխարհային կրոնները:

Հռետորական խոսքի մշակույթ:

Պարույր Սևակի «Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն» հոդվածը:

Հայաստանի հանրապետության գիտ. խորհուրդ

28-րդ շաբաթ

Հայկական պարատեսակներ, օրորոցայիններ, անտունիներ:

Կոչականը և ուրիշի ուղղակի խոսքը հայերենում:

Հայերենի կետադրությունը:

29-րդ շաբաթ

Հայոց մայրաքաղաքները: Հայկական արքայատոհմեր:

Հայ հեթանոս աստվածները: Գողթան երգեր, վիպասանք:

Խոսքի մշակույթի կապը տարբեր գիտաճյուղերի հետ:

30-րդ շաբաթ

Ամփոփում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2007:
3. Ժամանակակից հայոց լեզու, հատոր 1-ին, Եր., 1979, հատոր 2-րդ, Եր., 1974, հատոր 3-րդ, Եր., 1976:
4. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1993:
5. Բարսեղյան Հ., Ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973:
6. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
7. Մկրտչյան Ռ., Ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992:
8. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Եր., 2011:
9. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2012:
10. Стернин И., Практическая риторика, Воронеж, 1996.
11. Ներսիսյա ն Վ. Հայ հին գրականություն, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, 2013:
12. Арутюнян Альфред, Западная Европа. от раннего христианства до Ренесанса, Ер., 2000.
13. Եղիազարյան Ա., Սասնա ծռեր էպոսի պոետիկան, Եր., 2013:
14. Լեո, Հայոց պատմություն, 1-ին հատոր, Թիֆլիս, 1917:
15. Լեո, Հայոց պատմություն. նորագույն շրջան, Եր., 1927:
16. Հարությունյան Վ., Հայ ճարտարապետության պատմություն, Եր., 1992:
17. Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն, Եր., 2010:
18. Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին. Պատմությունը և ներկան, Եր., 2016:
19. Թադևոսյան Ա., Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից, Ե., 1977:

Հայ-ռուսական համալսարանի գիտ. խորհուրդ

20. Գյոդակայն Գ., Էջեր հայ երաժշտության պատմությունից, Եր., 2009:
21. Ժամկոչյան Հ. և ուրիշներ, Հայոց պատմություն, Եր., 1975:
22. Декоративное искусство средневековой Армении, [Альбом], Л□, 1971.
23. Измайлова Т., Армянская миниатюра XI века, М., 1979.
24. Բախչինյան Ա. Հայերը համաշխարհային պարարվեստում, Երևան, 2016:
25. Բախչինյան Ա., Հայազգի գործիչներ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (կենսագրական հանրագիտակ), Երևան, 2002:

Հայ-Ռուսական համալսարանի
գիտ. խորհուրդ